Ռուսաստանյան տպագրություններ

20. ՏԱՐԵՑՈՅՑ։ Ն. Նախիջևան, Արղության տպարան, 1791 (կամ 1792). 56 կրկնագծափակ էջ, անվանաթերթը խորանի մեջ, որի ներքևում՝ յամի Փ. 1782 *(խորանի պատրաստման տարեթիվը)։ Մատենադարան, № 46։*

Ա. անվանաթերթ՝ Տարեցոյց եւ օրացոյց. Նահանջ ամի Տեառն մերոյ 1792։ Եւ մերոյ բուականիս ոմխա։ Ի Նորն Նախիջեւան։

Բ. անվանաթերթն սկսվում է՝ Տարեցոյց եւ օրացոյց։ Նահանջ ամի Տեառն 1792, *վերջում՝* Ի տպարանի նորին Բարձր Սրբազանութեան։

Տպագրության տարեթիվ չկա, բայց քանի որ 1792-ի տարեցույց է, ապա պետք է տպված լինի կամ այդ կամ նախորդ թվին։

21. Ղազար Ջահկեցի ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ։ Ն. Նախիջևան, Արղության տպարան, 1792, 238 զարդափակ էջ, զարդեր։ Հանրային գրադարան, № 247, 1220, Պատմության թանգարան, № 116։

Անվանաթերթն սկսվում է. Գիրք աղօթից որ կոչի աստուածաղերս Աւարեալ տեառն Ղազարու հոգեւոյս Կաթուղիկոսի, *իսկ վերջում կարդում ենք՝* Յամի Տեառն 1792։ Իսկ ի թուին հայոց ոմխա օգոստոսի 9։ Արդեամբ և ծախիւ Բարեպաշտօն և Մեծահաւատ Ակնցի Մարկոսեան Մահտեսի Յոհանին Բէ-հէնց։ Ի տպարանի նորին Բարձր Սրբազանութեան։ Ընդ հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ Վանիցն որ ի Նորն Նախիջեւան։

Հիշատակարանում (էջ 236—238) նորից խոսվում է նույն Յոհան Բեհենցի մասին (այստեղ՝ Պէհէնց «ի յակնայ քաղաքէն»), որը նշանակալից դեր է կատարել Ն. Նախիջևանի տպարանի պահպանման գործում «...ըստ իւրում բարեացապարտ առատաբարոյութեան յանձն էառ զամենայն ջծախսն սորին լիապես. և պայմանեաց յօժար կամօք, զի բովանդակ գումարն դրամոյ՝ ծախուց սորին՝ մշանջենաւոր մնասցէ ներ տպարանիս. որով ի ժամանակս ժամանակս՝ քանիցս այնու դրամով գրեանք տպեցին...»։

22. Հովսեփ Արղությանց ՔԱՐՈԶ։ Ն. Նախիջևան (կամ Աստրախան), Արղության տպարան, 1795, 27 էջ, զարդեր։ Հանրային գրադարան, № 413, Պատմության թանգարան, № 486։

Անվանաթերթն սկսվում է. Քարոզ Նարադրեալ և ասացեալ ի Յովսէփայ Սրբազան Արք Եպիսկոպոսէ՝ Հիւսիսային կողմունս եղեալ ամենայն ազգիս Հայոց. ի 1792. թուոյ Ապրիլի 4.ին, *վերջում՝* Տպեալ ի 1795 թուոյ, յՕգոստոսի. 2. Ի տպարանի Նորին Բարձր Սրբազանութեանն։

Գրքում տպագրության վայրը նշված չէ, բայց քանի որ 1795-ին է Արղության տպարանը Ն. Նախիջևանից փոխադրվել Աստրախան, ուստի և դժվար է որոշել, թե Արղության քարոզների այս փոքրիկ հավաքածուն այդ քաղաքներից որում է տպվել։

23. ԺԱՄԱԳԻՐՔ։ Աստրախան, Արղության տպարան, 1796, 535 կրկնագծափակ էջ, պատկերներ, զարդեր։ Հանրային գրադարան, № 1931։

Ա. անվանաթերթն սկսվում է Գովեստ բերկրանաց, *Բ. անվանաթերթը՝* Ժամակարգութիւն հաստատեալ աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց...։ *Վերջում՝* Կրկին տպեալ արդեամբ և ծախիւ ի Սուրաբ բնակեալ Աղաբաբեան Բարեպաշտ Պարոն Ստեփանոսին։ Յամի Տեառն 1796. ի յՕգոստոսի 11։ Ի տպարանի Նորին Բարձր Սրբազանութեան։ Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, որ ի Յաժդարխան։